ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2023

# ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

ԹԵՍՏ 3

| | |
|---|---|
| ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ | |
| ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ | |

*Հարգելի՛ ուսուցիչ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

***Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:***

**(1-3) Գտնել արտահայտության արժեքը.**

**1** $\cos 15^0 - \sin 15^0$:

1) 0,5
2) $\sqrt{0,5}$
3) 0,75
4) $\sqrt{0,75}$

**2** $\left(\frac{1}{4}\right)^{\log_{0,5} 6 - 1} - \log_{\sqrt{3}} 9$:

1) 25
2) 34
3) 72
4) 140

**3** $\sqrt{69 - 16\sqrt{5}} + \sqrt{9 - 4\sqrt{5}}$:

1) 6
2) $10 - 2\sqrt{5}$
3) $6 + \sqrt{5}$
4) 8

**(4-6) Գտնել հավասարման արմատները.**

**4** $\dfrac{x^2-x-6}{\sqrt{2-x}}=0$:

1) -2
2) -3 և -2
3) -3
4) 3

**5** $\log_{\sqrt{5}} x+\log_{0,2} x+\log_{25} x=1,5$:

1) 1
2) 25
3) 3
4) 5

**6** $|\sin x|=|\cos x|$:

1) $\dfrac{\pi}{2}+\pi n,\ n\in Z$
2) $\dfrac{\pi n}{4},\ n\in Z$
3) $\dfrac{\pi}{4}+\pi n,\ n\in Z$
4) $\dfrac{\pi}{4}+\dfrac{\pi n}{2},\ n\in Z$

**(7-9) Գտնել անհավասարմանը բավարարող ամբողջ թվերի քանակը:**

**7** $\sqrt{x(25-x)} \le 12$ :

1) 19
2) 20
3) 17
4) 18

**8** $\log_{(x-1)}(10x+14) > 2$:

1) 11
2) 12
3) 13
4) 10

**9** $\left|-5+2|1-x|\right| \le 7$:

1) 14
2) 13
3) 12
4) 11

**(10-12) Խնձորի, տանձի և դեղձի գները հարաբերվում են ինչպես 2:3:4: 26 կգ միրգ գնելիս գնորդը յուրաքանչյուր տեսակի մրգի համար վճարել է նույն գումարը:**

**10** Քանի՞ կգ տանձ է գնվել:

1) 12
2) 14
3) 6
4) 8

**11** Քանի՞ կգ խնձոր կարելի է գնել ամբողջ գումարով:

1) 34
2) 36
3) 30
4) 32

**12** Գնված դեղձի կշիռը քանի՞ տոկոսով է պակաս գնված տանձի կշռից:

1) 25
2) 30
3) 15
4) 20

**(13-15) Կատարել առաջադրանքները:**

**13** $\frac{x}{2}+1$, $2x-1$, $6x-8$ թվերը կազմում են երկրաչափական պրոգրեսիա: Գտնել $x$-ը:

1) 3
2) 1
3) 2
4) 5

**14** Տրված է $q=\frac{2}{3}$ հայտարարով անվերջ նվազող երկրաչափական պրոգրեսիան, որի գումարը հավասար է 4,5: Գտնել պրոգրեսիայի առաջին անդամը:

1) 3
2) 2,5
3) 2
4) 1,5

**15** $(a_n)$ թվաբանական պրոգրեսիայում $2a_5+a_7+a_9=48$ և $a_6-a_2=8$: Գտնել $S_{20}$-ը:

1) 320
2) 450
3) 200
4) 400

**(16-18) Տրված է $f(x) = e^x + e^{-x}$ ֆունկցիան:**

**16** Գտնել $f$ ֆունկցիայի գրաֆիկին նրա $x_0 = \ln 2$ աբսցիսն ունեցող կետում տարված շոշափողի անկյունային գործակիցը:

1) 1,5
2) 2,5
3) 0,5
4) 1

**17** Նշվածներից ո՞րն է *ճիշտ* պնդում $f$ ֆունկցիայի համար:

1) ոչ զույգ է, ոչ էլ կենտ
2) աճող է
3) կրիտիկական կետ չունի
4) ունի փոքրագույն արժեք

**18** Գտնել $f$ ֆունկցիայի փոքրագույն արժեքը $[-1; \ln 2]$ միջակայքում:

1) 2,5
2) 2,2
3) 2e
4) 2

**(19-21) Շրջանագիծն անցնում է 12 սմ և 16 սմ էջերով ուղղանկյուն եռանկյան բոլոր կողմերի միջնակետերով:**

**19** Գտնել շրջանագծի կենտրոնի հեռավորությունը ներքնաձիգից:

1) 5 սմ
2) 6 սմ
3) 4,5 սմ
4) 4,8 սմ

**20** Գտնել ներքնաձիգի վրա շրջանագծով առաջացած հատվածներից ամենափոքրի երկարությունը:

1) 2,4 սմ
2) 2,8 սմ
3) 1,8 սմ
4) 2 սմ

**21** Գտնել շրջանագծի շառավղի երկարությունը:

1) 10 սմ
2) 6 սմ
3) 5 սմ
4) 8 սմ

**(22-24) Կանոնավոր քառանկյուն պրիզմայի հիմքի կողմը $3\sqrt{2}$ , իսկ պրիզմայի անկյունագիծը՝ 12:**

**22** Գտնել պրիզմայի անկյունագծի և հիմքի հարթության կազմած անկյունը:

1) $60^0$
2) arc tg2
3) $30^0$
4) $45^0$

**23** Գտնել պրիզմայի հիմքի անկյունագծով անցնող այն հատույթի մակերեսը, որը պրիզմայի հիմքի հետ կազմում է $60^0$ անկյուն:

1) $9\sqrt{6}$
2) 24
3) 18
4) $8\sqrt{3}$

**24** Գտնել պրիզմային արտագծած գնդի ծավալը:

1) $144\pi$
2) $432\pi$
3) $216\pi$
4) $288\pi$

**(25-27) Տրված է $ABCDA_1B_1C_1D_1$ խորանարդը:**

**25** Նշվածներից ո՞րն է սխալ պնդում:

1) $\overrightarrow{DC} \cdot \overrightarrow{BC_1} = 0$
2) $\overrightarrow{AD_1} = \overrightarrow{DB} + \overrightarrow{B_1A}$
3) $\overrightarrow{AC_1} \perp \overrightarrow{BD}$
4) $\overrightarrow{A_1B} \uparrow\downarrow \overrightarrow{CD_1}$

**26** Նշվածներից ո՞րն է տարահարթ վեկտորների եռյակ:

1) $\overrightarrow{AB}$, $\overrightarrow{CC_1}$, $\overrightarrow{B_1D}$
2) $\overrightarrow{A_1B}$, $\overrightarrow{BD_1}$, $\overrightarrow{B_1C_1}$
3) $\overrightarrow{C_1A_1}$, $\overrightarrow{C_1D}$, $\overrightarrow{B_1C}$
4) $\overrightarrow{A_1C}$, $\overrightarrow{D_1C}$, $\overrightarrow{AD}$

**27** Գտնել $\overrightarrow{AB_1}$ և $\overrightarrow{BD}$ վեկտորների կազմած անկյունը:

1) $90^0$
2) $120^0$
3) $45^0$
4) $60^0$

**(28-30) Կատարել առաջադրանքները.**

**28** Հաշվել $\lim\limits_{n\to\infty}\dfrac{1}{\sqrt{9n^2+n}-3n}$ :

1) 0
2) 6
3) 3
4) 9

**29** Հաշվել $4\int_0^{\frac{\pi}{2}}\cos^2 x dx$ :

1) $\dfrac{\pi}{4}$
2) $\dfrac{\pi}{2}$
3) $\pi$
4) $2\pi$

**30** Գտնել $z=\dfrac{7+i}{1-i}$ կոմպլեքս թվի մոդուլը:

1) 4
2) 5
3) 2
4) $2\sqrt{2}$

**(31-33) Կատարել առաջադրանքները.**

**31** 4-ի բազմապատիկ քանի՞ տասնանիշ թիվ կարելի է կազմել չորս հատ 3 և վեց հատ 2 թվանշաններով:

**32** Գտնել n-ը, եթե $A_n^5 = 12A_n^4$:

**33** Գտնել 9 թվի հետ փոխադարձաբար պարզ երկնիշ թվերի քանակը:

**(34-36) Կատարել առաջադրանքները.**

**34** Եթե հնգանիշ թվին ձախից կցագրենք 4 թվանշանը, ապա կստանանք 4 անգամ ավելի մեծ թիվ քան աջից 4 կցագրելիս: Գտնել սկզբնական թվի $\frac{1}{16}$ -րդ մասը է:

**35** Գտնել $32^{32}$-$23^{23}$ թիվը 10-ի բաժանելիս ստացված մնացորդը:

**36** Գտնել n-ը, եթե հայտնի է, որ $\left(\sqrt[3]{x}+\frac{1}{x}\right)^{n}$ երկանդամի վերլուծության չորրորդ գումարելին կախված չէ x-ից:

**(37-39) Տրված է $\sqrt{x-7} \geq \sqrt{2x-a}$ անհավասարումը:**

**37** a-ի ի՞նչ արժեքի դեպքում անհավասարման լուծումը 3 երկարությամբ միջակայք է:

**38** Գտնել անհավասարման ամբողջ լուծումների գումարը a = 18-ի դեպքում:

**39** Գտնել a-ի այն արժեքը, որի դեպքում անհավասարումն ունի միակ լուծում:

**(40-42) Միմյանցից 90 կմ հեռավորության վրա գտնվող վայրերից միաժամանակ միմյանց ընդառաջ մեկնեցին երկու ավտոմեքենա: Նրանցից առաջինը B հասավ հանդիպումից 1 ժ 15 ր անց, իսկ երկրորդը A հասավ հանդիպումից 48 ր անց:**

40 Քանի՞ րոպեից հանդիպեցին մեքենաները:

41 Քանի՞ կմ/ժ է երկրորդ մեքենայի արագությունը:

42 Առաջին մեքենան քանի՞ ժամում կանցնի այն ճանապարհը, որն անցնում է երկրորդ մեքենան 4 ժամում:

**(43-45) ABCD զուգահեռագծի B անկյան կիսորդը AD կողմը հատում է E կետում: E կետով տարված է AC անկյունագծին զուգահեռ ուղիղ, որը CD կողմը հատում է F կետում: Հայտնի է, որ $\angle B = 150^0$, $ED = 4$, $DF = 3$:**

**43** Գտնել AB կողմի երկարությունը:

**44** Գտնել DEF եռանկյան մակերեսը:

**45** Գտնել BED անկյան աստիճանային չափը:

**(46-48) ABC հիմքով DABC կանոնավոր եռանկյան բուրգի հիմքի կողմը 12 է, իսկ բուրգի DO բարձրությունը՝ 22: E, M և N կետերը համապատասխանաբար AD, AB և AC կողմերի միջնակետերն են:**

**46** Գտնել բուրգի EBC հատույթի մակերեսը:

**47** Գտնել ME և DN ուղիղների հեռավորությունը:

**48** Գտնել DABC և AEMN բուրգերի ծավալների հարաբերությունը:

**(49-51) Տրված է** $\begin{cases} \dfrac{xy^2 - 2xy - 4y + 8}{\sqrt{4 - y}} = 0 \\ y = ax \end{cases}$ **համակարգը (a-ն պարամետր է):**

**49** Գտնել a-ի այն ամենափոքր արժեքը, որի դեպքում համակարգը կունենա ճիշտ երկու լուծում:

**50** Գտնել a-ի այն ամբողջ արժեքների քանակը, որոնց դեպքում համակարգը ունի երեք տարբեր լուծում:

**51** Գտնել a-ի ամենամեծ ամբողջ արժեքի մոդուլը, որի դեպքում համակարգն ունի ճիշտ մեկ լուծում:

**(52-54) Կատարել առաջադրանքները.**

**52** AD=10 տրամագծով կիսաշրջանագծին ներգծած է ամենամեծ մակերեսով ABCD սեղանը: Գտնել նրա BC հիմքը:

**53** $P(x)$ բազմանդամը $x^2+5x-6$ բազմանդամի վրա բաժանելիս ստացվում է $2x+5$ մնացորդը, իսկ $(x-1)^2$-ու վրա բաժանելիս՝ $cx-2$ մնացորդը: Գտնել $c$-ն:

**54** Գտնել a-ի այն արժեքը, որի դեպքում $f(x)=(x^2-1)(x-a)$ ֆունկցիայի $x_1=-2$ և $x_2=4$ կետերում տարված շոշափողները լինեն զուգահեռ:

**(55-57) Կատարել առաջադրանքները.**

**55** Գտնել $f(x)=\frac{50x}{x^2+25}$ ֆունկցիայի մեծագույն արժեքը:

**56** Գտնել $f(x)=\sin\sqrt{14x-x^2}$ ֆունկցիայի գրաֆիկի և աբսցիսների առանցքի հատման կետերի քանակը:

**57** Գտնել a պարամետրի այն ամենափոքր արժեքը, որի դեպքում $f(x)=\frac{x^3}{3}+2x^2+ax-2$ ֆունկցիան աճող է $(-\infty;+\infty)$-ում:

**(58-60) Տրված է a պարամետրով $(x+2)^2(x^2+4x-3+a)=4a-12$ հավասարումը:**

**58** Գտնել a-ի այն բնական արժեքը, որի դեպքում հավասարումն ունի երեք տարբեր արմատ:

**59** Գտնել a-ի այն բնական արժեքների քանակը, որոնց դեպքում հավասարումն ունի չորս տարբեր արմատ:

**60** Գտնել a-ի այն ամենափոքր բնական արժեքը, որի դեպքում հավասարումն ունի ճիշտ երկու տարբեր արմատ: